ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/92/2023-24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 09 հունվարի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող) Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի հունվարի 09-ին, քննելով «Հաղթանակ» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Մնացականյանի կողմից 2021 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չիրապարակելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/92/2023-24 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով վերապահված գործառույթը, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև 27-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով սահմանված պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ 2021 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը (այսուհետ՝ նաև Տարեկան հաշվետվություն) օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել և օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակվել:

1.2 Վերոնշյալ խախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2023 թվականի նոյեմբերի 29-ին թիվ 01/2604/28-2023 գրությամբ Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Մնացականյանին է ներկայացրել ծանուցում Տարեկան հաշվետությունը սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելու և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու առերևույթ խախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով մասնակցելու Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը: Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Մնացականյանը չի ներկայացել:

1.3 2023 թվականի դեկտեմբերի 08-ին պատշաճ ծանուցված Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Մնացականյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/95/2023 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 01/2964-2023 գրությամբ Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Մնացականյանը ծանուցվել է վարչական իրավախախտման գործի քննության տեղի և ժամանակի մասին:

2024 թվականի հունվարի 09-ին՝ ժամը 12:15-ին Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության մասին ն պատշաճ Կուսակցության ծանուցված քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Մնացականյանի բացակայությամբ տեղի է ունցել գործի քննություն:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

1.2 Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Մնացականյանը Հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերով փաստել է, որ 23.06.2023 թվականից հանդիսանում է «Հաղթանակ» Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ: Մասնավորպես, թիվ 1-2023 արձանագրության համաձայն՝ 25.05.2023 թվականին տեղի է ունեցել Կուսակցության արտահերթ համագումար, որի ընթացքում որոշվել է կատարել մի շարք փոփոխություններ, որոնց թվում է նաև Կուսակցության անվանափոփոխությունը («Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցությունը վերանվանվել է «Հաղթանակ» կուսակցության) (--), գործադիր մարմնի ղեկավարի փոփոխությունը:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն ուսումնասիրելով և վերլուծելով թիվ ՎԻՎ/92/2023-24 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում հետևյալը.

3.1 Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Մնացականյանը 23.06.2023 թվականինից հանդիսանում է «Հաղթանակ» Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ:

3.2 2021 թվականի Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին Տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում (հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում), Հանձնաժողով ներկայացնելու և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում, այն է՝ մինչև 2022 թվականի սեպտեմբերի 15-ը հրապարակելու պարտավորություն «Հաղթանակ» Կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Մնացականյանը չի ունեցել:

3. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

3.1 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը:

3.2 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունն իր հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

3.3 20.01.2021 թվականի թվականին ուժի մեջ մտած «կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-1-Ն օրենքի անցումային դրույթ հանդիսացող 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունները սույն օրենքի 20-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ 2021 թվականի հաշվետու տարվա վերաբերյալ իրենց տարեկան հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները հրապարակում են մինչև 2022 թվականի սեպտեմբերի 15-ը:

3.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը.

3.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական

իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.6 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

3.7 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.13--րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք

կակարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

3.10 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

3.11 Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.12 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

3.13 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման* նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման*** *դեպքի* կամ **կազմի *բացակայությունը***:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթը նպատակ է հետապնդում ապահովել հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հանրային հաշվետվողականությունը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Սույն գործով խախտման (արարքի) որակական կողմը գնահատելիս Հանձնաժողովն էական է համարում հետևյալ **հանգամանքների առկայությունը.**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման* նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման*** *դեպքի* կամ **կազմի *բացակայությունը***: Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ ***իրավախախտման կազմը բացակայում*** է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, (...) քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, ***մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ)*** այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Մատնանշված իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքը՝ ***անձը վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն մեղքի առկայության դեպքում:*** Նմանատիպ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշմամբ՝ նշելով, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ՝ ***անձը վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն մեղքի առկայության դեպքում:***

Վերոնշյալով պայմանավորված՝ տվյալ դեպքում Վիկտոր Մնացականյանի արարքում բացակայում է մեղքը (անզգուշությունը), նրա արարքում զանցակազմի պարտադիր տարր

հանդիսացող մեղքը չի կարող համարվել հաստատված, ինչը բացառում է վարչական իրավախախտման առկայությունը, և, ըստ այդմ էլ, վարչական տույժի նշանակման իրավական հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Կարճել «Հաղթանակ» կուսակցության քաղաքական խորհրդի նախագահ Վիկտոր Մնացականյանի նկատմամբ հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ թիվ ՎԻՎ /92/2023-24 գործի վարույթը՝ **իրավախախտման կազմի բացակայության հիմքով**:

1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Վիկտոր Մնացականյանին սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**